ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐԻ ՍՐԲԱՑՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՈՂԵՐՈՒՄ

ԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ

Գերմանական հողերում[1]՝ քրիստոնեության տարածման և գերմանացիների համաքրիստոնեական ինտեգրման գործընթացի պատմության մեջ, դեռևս միջնադարից առկա հայկական ներկայության փաստերի ու հանգամանքների ուսումնասիրությունը, մասնավորապես, թե ինչպես հայ եկեղեցու հայրերը սրբացվեցին գերմանացիների կողմից, առնչվում է արդի գերմանահայ համայնքի մշակութային ինտեգրման գործընթացում հայերի ինքնության արժևորմանն ու ինքնագնահատականին: Հայ հոգևոր հայրերի՝ միջնադարից մինչ օրս կենսունակ պաշտամունքը Գերմանիայում, թերևս, յուրօրինակ կամուրջ է, մի կողմից՝ վաղնջական քրիստոնյա Հայաստանի և կենտրոնական Եվրոպայի միջև, մյուս կողմից՝ նույնականացման մշակութային կետ վերջինով մեկ ցրված հայերի համար: Հանգամանքները, որոնք էական են եղել գերմանական հողերում Հայաստանի մասին պատկերացում և այդ երկրից սերող հոգևոր հայրերի մասունքների պաշտամունք ստեղծելու համար, կապակցվում են Արարատ լեռան մասին հնախոսական հետքերի ու ավանդազրույցների, Հայաստանի ամենավաղ քրիստոնեացման կենսափորձի և, առհասարակ, միջնադարյան քրիստոնեական պաշտամունքային մշակույթի ավանդույթների հետ:

Բազմազանությամբ, բայց և կրոնով արմատավորված որոշակի միասնությամբ բնութագրվող միջնադարյան արևմտաեվրոպական մշակույթի քրիստոնեացման գործընթացը սկսվեց Ք. հ. 1-ին հազարամյակից և, ընդհանուր առմամբ, ավարտվեց X–XI դդ. (որոշ երկրներում՝ ավելի շուտ, որոշներում՝ ավելի ուշ՝ ընդհուպ 1000 թ.): Մինչև IV դ. վերջը քրիստոնեությունը հաստատվեց Հռոմեական կայսրության գրեթե բոլոր նահանգներում: 340-ականներին եպիսկոպոս Վուլֆիլի ջանքերով այն ներթափանցեց

---

[1] «Գերմանական հողեր» արտահայտությունը օգտագործվում է՝ ի տարբերություն «երկիր» կամ «պետություն» բառերի՝ կիրառման լայն իմաստով: Ներկայիս Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) տարածքը դարեր շարունակ հաճախակի փոխվել է: Գերմանական ցեղերի միացյալ պետության հիմնադրման ավանդական տարեթիվը համարվում է մ. թ. 962 թ. փետրվարի 2-ը, երբ գերմանական Արևելաֆրանկյան թագավորության արքա Օտտոն I, միավորելով Եվրոպայի մեծ մասը, Հռոմում թագադրվեց՝ դառնալով իր հիմնադրած՝ Գերմանական Ազգի Սրբազան Հռոմեական Կայսրության միապետը: Կայսրությունն իր հզորության գագաթնակետին ներառում էր Գերմանիան, որը համարվում էր կայսրության միջուկը, հյուսիսային և միջին Իտալիան, Նիդեռլանդները, Չեխիան և Ֆրանսիայի որոշ տարածքներ: Այդ պետական կազմավորումը գոյատևեց մինչև 1806 թ.:

գոթական ցեղերի մեջ, որոնք քրիստոնեությունն ընդունեցին այն ժամանակ Հռոմեական կայսրության արևելյան հատվածում գերակշռող ուսմունքի՝ արիոսականության[2] տեքստով: Այն տարածվեց վեստգոթերի՝ դեպի արևմուտք տեղափոխման հետ: V–VI դդ., երբ այն արդեն ընդունվել էր գերմանական ցեղերի կողմից, ֆրանկների արքա Քլոդվիգը (466–511 թթ.) ընդունեց ուղղափառ քրիստոնեական դավանանքը, և միայն VII դ., քաղաքական նկատառումներով, Եվրոպայի մեծ մասում հաստատվեց քրիստոնեական Նիկիական ուղղափառ[3] դավանանքը: Եվ ինչպես ամենուր, պետականորեն ընդունվող կրոնը հաստատվում, ասիմիլացվում էր վերևից, քանզի սովորույթի ուժը մեծ էր, և ժողովուրդների մեջ դեռ խոր արմատներ ունեին հեթանոսական պատկերացումներն ու կերպարները: Դրանք վերաիմաստավորվում ու վերախմբավորվում էին քրիստոնեական բովանդակությամբ՝ գործընթաց, որի միջով վաղուց անցել էր Հայաստանը (IV–V դդ. Հայ եկեղեցու հոգևոր-վարչական սահմանները հիմնականում համապատասխանել են Հայաստանի վարչաքաղաքական սահմաններին: X դ. Հայոց կաթողիկո-

---

[2] *Քրիստոնեական հերետիկոսական ուսմունք է (IV դ.), որի հիմնադիրն է երեց Արիոս Ալեքսանդրիացին (այստեղից էլ՝ անվանումը): Ուսմունքի ակունքներն էին հուդայականությունը և միջին պլատոնականությունը, որոնցից Արիոսը վերցրել էր Աստծո կատարյալ միակության գաղափարը. վեճերի կենտրոնական խնդիրը Քրիստոսի աստվածության, Աստվածային էության և Հոր հետ համագոյության հարցի՝ կասկածի տակ դնելն էր՝ ժխտելով Հոր և Որդու համագոյությունը: Ըստ այդմ՝ Հիսուսը միակ Հայր Աստծո ցանկությամբ, արարչագործության համար ստեղծված, գերմարդկային արարած-մահկանացու էր (տե՛ս Մ. Ա ր ա մ յ ա ն. Երեք տիեզերական ժողովների դավանությունը.– «Գանձասար», Ա, 1992, էջ 110–112,* M. B e r n d t. Arianism. Roman Heresy and Barbarian Creed, Ashgate, Farnham, 2014, S. 34–35; M. R i t t e r. Arianismus.– Theologische RealenzyklopՊdie 3, De Gruyter, Berlin, 2004, S. 692–719*):*

[3] *325 թ. մայիսի 20-ին, Բյուզանդական կայսր Մեծն Կոստանդիանոսի (306–337 թթ.) հրամանով գումարվել է Նիկիայի Ա տիեզերական ժողովը Բիթանիայի Նիկիա քաղաքում: Ժողովին մասնակցել են Ընդհանրական եկեղեցու 318 հայրապետ, այդ թվում՝ Ալեքսանդրիայի պատրիարք Ալեքսանդր Ալեքսանդրացին, Աթանաս Ալեքսանդրացին (այդ ժամանակ դեռևս սարկա-վագ), Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին՝ Արիստակեսը և եկեղեցու այլ նշանավոր եպիսկոպոսներ: Առաջին տիեզերական ժողովի հրավիրման շար-ժառիթն էր Ալեքսանդրիայի քահանա Արիոսի հերետիկոսական ուսմունքի քննությունն ու դատապարտումը: Ժողովը դատապարտում է հերետիկոսական ուսմունքներն ու ամփոփում քրիստոնեական դավանանքի Նիկիական հանգանակը. «Հավատում ենք մեկ Աստծո՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին և մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն՝ ծնված Հայր Աստծուց միածին, այսինքն՝ Հոր էությունից, Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե Արարած» (տե՛ս Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 261, Ա. Տ ե ր - Մ ի ք ե լ յ ա ն. Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 17–20, Ն. Լ ա մ բ ր ո ն ա ց ի. Մեկնություններ «Հավատամքի» և «Հայր մեր»-ի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, էջ 104):*

ության ենթակա թեմեր են գործել նաև Հայաստանից դուրս, և Հայ եկեղեցու վարչական սահմաններն արդեն որոշվել են ոչ թե քաղաքական, այլ՝ դավանական բաժանումով: Անկախ բնակության վայրից՝ Հայ եկեղեցուն են ենթարկվել հակաքաղկեդոնական բոլոր հայերը)[4]: Բնականաբար, նոր-նոր քրիստոնեացվող Արևմտյան Եվրոպայի համար հայ հոգևոր հայրերի փորձը և նրանց մասունքներն ուղենշային կարող էին լինել ճշմարիտ քրիստոնյայի կերպարի ձևավորման համար: Քրիստոնեության տարածման գործում նկատելի դեր խաղացած առանձին հայերի և նրանց երկրի մասին տեղեկությունները լայնորեն հայտնի դարձան եկեղեցական գրվածքների միջոցով[5]: Հայ հոգևոր հայրերը, չլինելով Հայ Առաքելական եկեղեցու սրբեր, IX դ. լատինական (կաթոլիկ) եկեղեցում սրբադասվեցին, և նրանց պաշտամունքն այստեղ դարերով լայն տարածում գտավ: Նրանք ոչ միայն սրբադասվեցին, այլև դարձան ամենասիրելի ու պաշտելի սրբերից, որոնց անուններով եկեղեցիներ կառուցվելուց, եկեղեցական տոներ ու ծեսեր անցկացվելուց զատ, քաղաքներ ու փողոցներ անվանակոչվեցին, և դրանք առկա են այսօր էլ: Հայերի ու գերմանացիների առաջին փաստացի շփումներից առաջ գերմանական հողերում աստվածաշնչյան տեքստերի միջոցով որոշակի պատկերացում էր ձևավորված Հայաստանի մասին (նրա սրբազան Արարատ լեռը, Հայկական լեռնաշխարհը[6]), և գերմանական ժողովուրդների համար «Հայաստան», «Արարատ» անունները կոգնիտիվ կերպով կապվում էին նախաքրիստոնեական, հինկտակարանային խորհրդաբանական ըմբռնման հետ[7]: Արարատի թողած հնախոսական հետքն որոշակիորեն բնորոշում է քրիստոնեության մեջ (համենայնդեպս՝

---

[4] Ե. Պետրոսյան. Հայ Եկեղեցու Պատմություն, Ս. Էջմիածին, 1995, էջ 17, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 541, Մ. Օրմանեան. Ազգապատում, հ. Ա, Պէյրութ, 1959, էջ 11–13, 34–45, նույնի՝ Հայոց Եկեղեցին եւ իւր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, վերանայուած վեցերորդ տպագրութիւն, Մոնրէալ, 2001, էջ 115–116:

[5] O. Wimmer. Kennzeichen und Attribute der Heiligen, Innsbruck-Wien, 1993, S. 94; P. Halfter. Das Papsttum und die Armenier im frühen Mittelalter, Köln-Weimar-Wien, 1996, S.102–103.

[6] S. Weber. Ararat in der Bibel.– Theologische Quartalschrift, 83. Jahrgang, Ravensburg, 1901, S. 321-374, S. Lorenz und A. Schmidt. Die Staufer und Armenien.– Von Schwaben bis Jerusalem. Facetten staufischer Geschichte, Sigmaringen, 1995, S. 187-208.

[7] *Միջնադարյան որևէ ժամանակահատվածի՝ նույնիսկ մեկ տիպի մտածողության, դատողության, գրելաձևի դիտարկումը անխուսափելիորեն հանգում է համաքրիստոնեական (և՛ Արևմտյան, և՛ Արևելյան) ավանդույթի ակունքներից «Աստվածաշնչին»: Ըստ այդմ՝ քրիստոնեական և, ընդհանրապես, եվրոպական աշխարհագրության մեջ վաղնջական ժամանակներից հաստատվել և մինչ օրս լայնորեն տարածված է ավանդությունը, թե Արարատ լեռն է ցամաքի հենց այն մասը, որտեղ աստվածաշնչյան Նոյը համաշխարհային ջրհեղեղից հետո իր տապանով կանգ առավ, թեպետ, գիտական միջավայրում զանազանվում են իրարից «Աստվածաշնչում» նշվող «լեռ» և «լեռներ» հիշատակումները (Ծննդոց 8 : 4, «Եւ նստաւ տապանն յեւթներորդում ամսեանն ի քսան եւ յեւթն ամսոյն ի լերինս Արարատայ»):*

Արևմուտքում) հավատքի ռացիոնալ բնույթը և առեղծվածի տրամաբանական հիմնավորվածության դերը մարդկային ճանաչողության մեջ: «Արարատ» անվան նշանակության մասին, և այն, որ վերջինիս ու Հայաստանի միջև քաղաքական ու աշխարհագրական առնչություն կա, որ «Սուրբ գրոց» մեջ Արարատը միայն աշխարհագրական անուն չէ, այլ նախ՝ քաղաքական գաղափար, ապա՝ հետո աշխարհագրորեն հայկական երկիր, վկայում են «Սուրբ գրոց»[8] թարգմանությունները[9], հունական պատմիչների մատյանները[10]: Այդ աղբյուրներում, ինչպես նաև հայ հնագույն աշխարհագրության մեջ, «Արարատ» կամ «Այրարատ» անունը մե՛ր ներկայացված է իբրև Մեծ Հայքի կամ Հայաստանի մեջ պատմական նահանգ, գավառ, մե՛ր թարգմանված է «Հայաստան(=Հայք)», «Երկիր հայոց»: Այսինքն՝ վերոհիշյալ աղբյուրները, «Արարատ» ասելով, ուղղակի երկիրն են հասկացել՝ «Արարատը» համարելով Հայաստանի հին անունը, և «Հայաստան» է թարգմանվել՝ տեղը որոշելու իմաստով: Մյուս կողմից էլ, Արարատ-Հայաստան նույնականացման և տարբերակման գործում ազդեցություն է գործել, ըստ Օ. Շրադերի[11], աստրական «Սուրբ գրքերի» ոճը, որտեղ Արարատը մե՛ր ողջ Հայաստանի մի նահանգն է՝ առանց սահմանները ճշտելու, մե՛ր՝ ողջ երկիրը: Ուրեմն, այդ անունը տարբեր ձևեր է ստացել երկրի գլխով անցած անցքերի պատճառով: Հայաստանի աշխարհագրական սահմանների շարունակ փոփոխության պատճառով և նրա ամենատարածյալ ժամանակը հաշվի առնելով՝ ակնհայտ է, որ «Աստվածաշունչում»

---

[8] *«Սուրբ գրություններ» անվանվում էին բոլոր տեսակի «Սուրբ գրքերը», սակայն ժամանակի հետ այն համընդհանուր կիրառության մեջ մտավ որպես սուրբգրային տեքստերի կանոնականացված ժողովածու: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր ավանդություն և դոգմա պետք է գտնվի «Սուրբ գրքի» հետ հարաբերության մեջ (տե՛ս Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1985, էջ 4–5, Գ. Դ ա ր բ ի ն յ ա ն. Ներածություն Հին Կտակարանի, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Դաստիարակության և Քարոզչության կենտրոն, 2000, էջ 23):*

[9] V. I n g l i s i a n. Armenien in der Bibel, Wien, 1935, S. 32–39; Lexikon fФr Theologie und Kirche, Bd. III, Freiburg, 1959, S. 1195–1197. *Եսայի. 37:38. «Իսկ Արարատը Հայաստանի մեջ դաշտային երկիր է, որի մեջ Արաքսն է հոսում, անհավատալիորեն բերրի, որը մինչև Տավրոսյան լեռան ստորոտն է տարածվում: Ըստ այսմ՝ տապանն էլ, որով Նոյն իր զավակներով ազատվեց, ոչ թե Հայաստանի՝ ընդհանուր առումով, «Արարատյան» կոչված լեռներում հանգրվանեց, այլ՝ Տավրոսյան ամենաբարձր լեռների վրա, որոնք բարձրանում են Արարատյան դաշտի վրա», [Արարատը Սուրբ Գրոց մեջ, Վիեննա, 1901, էջ 2–7,* B. F i s c h e r. BeitrФge zur Geschichte der lateinischen Bibeltexte (Vetus Latina/Aus der Geschichte der lateinischen Bibel 12), Freiburg, 1986, S. 206–220; P. N a u t i n. Artikel Hieronymus, in: Theologische RealenzyklopФdie, Bd. 15 (1986), S. 304–315; H. Middeldorf, Codex Syriaco-Hexaplaris, Enslin, 1835, 2012, S. 120].

[10] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 9, Հին հունական աղբյուրներ, հ. Ա, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, Հերոդոտոս, Երևան, 1976, էջ 56, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քաղվածքներ Եվսեբիոսի Կեսարացու Քրոնիկոնից մի հին ձեռագրում, Վիեննա, 1905, Գ. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն. Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, 1979, էջ 388–400:*

[11] *Օ. Շ ր ա դ ե ր. Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 22–26:*

կամ «Սուրբ գրքերում» Արարատը չէր կարող բացառապես Հայաստան նշանակել, իսկ թարգմանության մեջ աշխարհագրորեն պատշաճ չէր լինի այդ անունը մշտապես պահելը՝ նրա իմաստի՝ մինչև քրիստոնեության ժամանակը կրած փոփոխությունները նկատի ունենալով: Բայց, քանի որ Արարատ ցեղագրական երկիրը Հայաստանի մյուս մասերի հետ էր կապված, ճիշտ այնպես, ինչպես "Allemagne" ասելով, Գերմանիան են հասկանում, «Արարատ» անունն օտարների համար ողջ պետությունն էր մատնանշում (հայ պատմիչներն էլ, որոշ տեղերում հայերի երկիրը նկատի առնելով, Արարատ-Արարատյան երկիր անվանումներն են կիրառում):

Այսպիսով, միջնադարյան քաղաքակրթության ամենաբնորոշ հատկանիշներից մեկը՝ ավանդապաշտությունը, կողմնորոշումը հնի՝ հին ժամանակների նկատմամբ և երբեմնի ընդունված մոդելներին հետևելը, բացատրում է Հայաստանի՝ որպես վաղ քաղաքակրթական օջախի նկատմամբ ընկալումը: Այն առնչվում էր միջնադարյան մարդու ընկալման մեջ «սկիզբ ու վերջ» ունեցող ժամանակի, աշխարհի կործանման և փրկության հետ կապված ավանդությանը: Եվ պատահական չէր, որ սրբազան մասունքների տեղափոխման «միգրացիոն աշխարհագրության» մեջ գերակշիռ ուղղությունը հարավից հյուսիս էր՝ սրբերով հարուստ, քրիստոնեական հին հերոսական պատմություններով հարուստ տարածքներ՝ Հայաստան, միջերկրածովյան և «լատինական» Եվրոպայի շրջաններ: Դեռ վաղ միջնադարից ռուս, նաև եվրոպական մի քանի այլ ժողովուրդների մեջ լեգենդների միջոցով լայնորեն տարածվել է այն միտքը, թե մի օր «Արարատ լեռից» և «հայկական հողերից» պիտի գա մեսիան և աշխարհը փրկի հակաքրիստոսի տիրապետությունից[12]: Այսինքն, միջնադարյան եվրոպացու՝ հրաշքի հնարավորության անվերապահ համոզվածությամբ գիտակցության մեջ դեռ նստած էր աշխարհի կործանման և փրկության «դեժավյուի» տեսլականը, որը կրկին կապված էր Արարատի և Հայկական լեռնաշխարհի հետ (այս մտայնությունը պահպանվեց մինչև 1800-ական թվականները, երբ Գերմանիայի Վյուրտեմբերգի, Բավարիայի, Պֆալցի և Հեսսենի երկրամասերի, մասամբ նաև Լյուքսեմբերգի և Շվեյցարիայի որոշ շրջանների գերմանախոս բնակիչները՝ մոտ 8000 հոգի, 1816 թ. սկսած մի քանի տարում տեղափոխվում են դեպի Հայաստան և հարակից շրջաններ)[13]: Եվ քանի որ, հավատի, եկեղեցական կյանքի տարածումն ու ամրապնդումը, իրենց հերոսներն էին պահանջում[14], գերմանական հողերում հայաստանյան աշխարհից սերող քրիստոնյա հոգևոր հայրերը կարող էին լիովին համապատասխանել այդ «պահանջին»:

---

[12] *S. W e b e r. Նշվ. աշխ., էջ 321–374.*

[13] *Ա. և Ռ. Յ ա ս կ ո ր ս կ ի ն ե ր. Շվաբները Մերձսևծովյան ավազանում և Կովկասում, Երևան, 2003, էջ 28–29:*

[14] A. A n g e n e n d t. Heilige und Reliquien, München, 1994,S. 18–20.

Սրբացված առաջին հայ հոգևորականը սբ. Ավրելիուսն[15] է (400–475 թթ.): Նա գերմանական Հիրսաու աբբայության բարեխոս սուրբն է, հիշատակման օրը՝ նոյեմբերի 9-ը: Նախ՝ նշենք, որ մասունքի պաշտամունքը սրբերի միջնադարյան պաշտամունքային մշակույթի անբաժանելի մասն էր: Եթե եկեղեցին ձևավորում էր մտածողություն, ըստ որի, երկրային կյանքը նախապատրաստություն է ապագա այլաշխարհիկ հավիտենական կյանքի՝ երկնքում, ապա սրբի մասունք պատվելը ծնվում էր համոզմունքից, թե, սրբի շիրիմին դիպչելով, մոտենում են նրա հոգուն, որ Աստծո մոտ է, սուրբը դառնում է բարեխոս և միջնորդ Բարձրյալի ու մահկանացուների միջև: Սուրբ մասունք համարվող ցանկացած առարկա երկնային արքայության մեջ տեղ ունենալու երաշխիք էր: Եվ քանի որ սրբի պաշտամունքը կենտրոնացած էր նրա թաղման վայրի շուրջ, ապա սրբի մասունքների կապը տաճարի հետ ժամանակի ընթացքում պարտադիր դարձավ: Մասունքների ձեռքբերման հարցում շահագրգիռ էին կրոնական հաստատությունները, ինչը, տաճարի կամ եկեղեցու փառքից զատ, սոցիալական կարգավիճակի ամրապնդման գրավական էր՝ սոցիալական էթիկայի վրա եկեղեցու ազդեցության կարևորագույն լծակներից մեկը, և նյութական ապահովության աճի աղբյուր: Սուրբ մասունքները սոցիալական ազդեցության գործիք էին, որոնց տիրանալով՝ հոգևոր համայնքներն աշխարհականների աչքերին երևում էին սրբերին առանձնապես մոտ, ինչը խթանում էր կամավոր նվիրատվությունները, ներդրումները և ուխտավորների հանգանակությունները: Սուրբ մասունքի տեր լինելը նաև իշխանավորների՝ ճշմարիտ քրիստոնյայի հեղինակություն ստեղծելու և իշխանության խորհրդանիշ հանդիսացող կարևոր տարրերից էր, թանկարժեք գանձ[16]: Ողջ միջնադարի ընթացքում մասունքները տեղափոխվում, նվիրվում, գողացվում ու վաճառվում էին: Հենց այդպես, գերմանական Կալվ[17] տարածաշրջանի կոմս Էրլաֆրիդի որդին՝ Նոթինգը (IX դ.), կայսր Կարլոս Մեծի իշխանության օրոք եպիսկոպոս նշանակվելով հյուսիսային Իտալիայի Վերչելլի տարածքում, շուտով իր ընտանիքի մեկ այլ կոմսից նամակ ստացավ, թե ուզում է կոմսությունում վանք կառուցել, և դրա համար «լավ սուրբ է պետք»: Եպիսկոպոսի մասնակցությամբ, մեկնողական երազի վկայությամբ կամ բարեհաճությամբ էր իրականացվում մասունքների ձեռքբերումը, հոչակումն ու տեղափոխումը (invention, elevation և translation)[18]: Ըստ այդմ՝ Վերչելլիի եպիսկոպոսի

---

[15] A. K o n r a d. Der Kreis Calw, Stuttgart und Aalen, 1986, S. 74–77, 117–121; A. O r d u k h a n y a n. Armenien in Deutschland; Geschichte und Gegenwart, Erfurt, 2008, S. 10–11.

[16] А. Я. Г у р е в и ч. Средневековый мир: культура безмолствующего большинства. М., 1990, с. 53–57.

[17] O. W i m m e r und H. M e l z e r. Lexikon der Namen und Heiligen, Innsbruck-Wien-München, 1982, S. 152.

[18] *Հռոմեական եկեղեցու կողմից արդեն V–VI դդ. ընդունված պահանջներից մեկն է դառնում տաճարում սրբազան մասունքի անհրաժեշտ ներկայությունը: VIII–IX դդ. օրենքն ընդունվեց նաև*

երազի համաձայն, այդ սուրբը պիտի լիներ «շատ կարևոր և լավ սուրբ», «եպիսկոպոս Հայաստանից» Ավրելիուսը: Իբրև «ամենթանկագին գանձ» ՝ սբ. Ավրելիուսի մասունքները Միլանից տեղափոխվեցին Վերչելլի, որտեղից կոմսը 830 թ. դրանք բերեց Կալվ՝ Հիրսաու աբբայություն: Եվ քանի որ միջնադարի ընթացքում սրբի աճյունը եկեղեցի տեղափոխելը սկզբում հաճախ, այնուհետև համատարած ուղեկցվում էր՝ տվյալ սրբին եկեղեցի նվիրելով, սկզբում սբ. Ավրելիուսի մասունքներն ամփոփվեցին հնագույն սբ. Նազարոս եկեղեցու մոտ, մինչև որ շիրիմի վրա կառուցվեց (830–838 թթ.)[19] սբ. Ավրելիուսի անունով առաջին վանքը՝ համարվելով հիմնադիր ընտանիքի սեփականությունը՝ որպես իշխող դինաստիայի քաղաքական իշխանության երաշխիք (այդտեղ էլ մինչ օրս հանգչում են սրբի մասունքները): Ինչո՞ւ Ավրելիուսը համարվեց «կարևոր և լավ սուրբ», բացի այն, որ Հայաստանից էր: Սրբի կերպարը, նրա մեջ մարմնավորված բարոյական կատարելության չափանիշն ուներ դիդակտիկ, խրատական հսկայական կշիռ: Նա ոչ միայն մարմնավորում էր կրոնական բացառիկությունը, Աստծո կողմից ընտրյալ լինելը, այլև իր կյանքով ու սրբակենցաղ վարքով, հավատացյալի համար ներշնչման, ընդօրինակման ուղենիշ էր՝ քրիստոնեական կրոնական վարքագծի կանոնների պահանջների ամրապնդման տեսակետից: Եպիսկոպոս Ավրելիուսը Հայաստանից միլանցիներին էր «վերադարձրել» (473–474 թթ.) արիոսականների կողմից հալածված, Հայաստան աքսորված ու այստեղ ապաստան գտած և հետագայում իր մահկանացուն կնքած քրիստոնեական ավանդական դավանաբանության հետևորդի՝ Միլանի եպիսկոպոս (351 թ.) Դիոնիսոսի մասունքները: Ավրելիուսի մասին IX դ. կենսագրական գործից տեղեկանում ենք նաև, որ եպիսկոպոս Ավրելիուսը Դիոնիսոսի մասունքները բերելուց մեկ տարի անց (475 թ.) Միլանում կնքել է իր մահկանացուն[20]: Ըստ սուրբ Ավրելիուսի մասին լեգենդի՝ Հայաստանում աքսորյալ Դիոնիսոսին ընդառաջ գնացած և նրա հետ «եղբայրացած» հայ եպիսկոպոսին լատինական եկեղեցու կողմից է տրվել հոգևոր անուն՝ Ավրելիուս՝ «աուրեուս»[21] բառից, որ նշանակում է՝ ոսկյա, գրավիչ: Իսկ նրա իրական անունը հայտնի չէ: Սուրբ Ավրելիուսի երկրային և, հատկապես, հայաստանյան կյանքի մասին տեղեկությունները՝ շարադրված կառոլինգյան շրջանին բնորոշ գեղարվեստականությամբ, սոսկ եկեղեցա-

---

Կարոլինգյան կայսրության եկեղեցական կազմակերպության կողմից, ապա դարձավ համատարած (տե՛ս A. Angenendt. Die Geschichte ihres Kultes vom frühen Christentum bis zur Gegenwart, München, 1994, S. 11–15*):*

[19] H. Schomann. Deutsche Kunstdenkmäler; Ein Bildhandbuch. Baden-Württemberg, Mänchen-Berlin, 1959, S. 369–370.

[20] E. Sauser. Aurelius von Riditio.– Biographisch-Bibliographisches Kirchenlexikon (BBKL), Bd XV 15, Bautz, Herzberg, 1999, S. 46–48.

[21] R. und K. Rahner. Lexikon für Theologie und Kirche, Innsbruck, Erster Band, Freiburg, 1957, S. 1108.

կան վարքաբանական ներբողներ են՝ հրաշագործ բժշկումների ու հոգևոր առաքելությունների մասին, իսկ նրա «անդրշիրիմյան» հրաշափառ գերմանական կյանքը՝ խնամքով ստեղծված լեգենդ[22]: Ըստ լեգենդի՝ Հայաստանում եղբայրացած եպիսկոպոսները նույնիսկ երդվել էին թաղվել նույն տեղում: Եվ Դիոնիսոսը, որ մահացել ու թաղվել էր Հայաստանում, մահից առաջ խնդրել էր Ավրելիուսին իր մասունքները, հնարավորության դեպքում, հայրենիք՝ Միլան տեղափոխել[23]: Եվ երբ Միլանում արիոսականությունը պարտվում է քրիստոնեական ավանդական եկեղեցուն, և եպիսկոպոս է դառնում Ամբրոսիուսը (374–397 թթ., Լատինական եկեղեցու չորս մեծագույն սրբերից մեկը), Ավրելիուսը, հոգալով նավաստիների ծախսերը, Դիոնիսոսի ոսկորները սավանի մեջ փաթաթած՝ հասցնում է Միլան: Դրանից հետո իր խոստումը կատարած և Միլանում մեծավաստակի, հավատավոր բարեշնորհի անուն ձեռք բերած եպիսկոպոս Ավրելիուսին, որը ցանկանում էր հայրենիք վերադառնալ, Միլանի նոր եպիսկոպոս Ամբրոսիուսը, բավականին հմուտ ճարտասան լինելով, մեծ ջանքեր գործադրելով, կարողանում է համոզել, որ նա մնա Միլանում և նպաստի քրիստոնեական ավանդական դավանաբանության տարածմանն ու ամրապնդմանը: Ավրելիուսն իր երկրային առաքելությունն ավարտում է Միլանում Դիոնիսոսի մահվան օրը, ու թաղվում նրա կողքին՝ նույն գերեզմանոցում[24]: Այդպիսով, իրականանում է երկու եպիսկոպոսների՝ Աստծո առաջ տված երդումը: Սակայն նկատենք, որ ժամանակագրությունից ակնհայտ է՝ Ավրելիուսը Դիոնիսոսին և Միլանի նոր եպիսկոպոս Ամբրոսիուսին չէր կարող հանդիպել, քանի որ Ավրելիուսը երկու սերունդ հետո է ապրել: Սբ. Ավրելիուսի պաշտամունքը (գլխի հիվանդությունների խնամակալ, արագահաս բարեխոս) մեծ փառքի գագաթին հասավ հատկապես 300 տարի անց[25], երբ Հռոմի պապ Լևոն IX պատմական նշանակալի այցով Կալվի կոմսի հետ սբ. Ավրելիուսի շիրիմը պատվեց և համարեց, որ ժամանակին Միլանի համար շատ կարևոր դեր կատարած հեղինակավոր «սբ. Ավրելիուսին՝ Հայաստանից, մեծանշանակ եկեղեցի է հարիր»[26]: Պապի հրամանով՝ վանքը վերակառուցվեց (1049 թ.)՝ որպես եկեղեցի: Ավետարանական ժամանակաշրջանում, երբ ավետարանչական թեոլոգիայում սրբերը տեղ չունեին, սբ. Ավրելիուսի պաշտամունքը զարմանալիորեն չմարեց, մարդիկ շարունակեցին մշտապես հարգել նրա շիրիմը և պատվել: 1954 թ. Կալվի կաթոլիկ ծխական համայնքը սբ. Ավրելիուսի եկեղեցին վարձակալեց, 1955 թ. այն վերակառուցվեց և վերա-

---

[22] P. M o r a n d. St. Aurelius, Hirsau, Bad Liebenzell/Hirsau, 2000, S. 152.

[23] K. G r e i n e r. Hirsau, seine Geschichte und seine Ruinen, Echterdingen, 2003, S.14–18.

[24] T h. K l ü p p e l. Der heilige Aurelius in Hirsau; Ein Beitrag zur Verehrungsgeschichte des Hirsauer Klosterpatrons, in: Hirsau: St. Peter und Paul, Bd II, Stuttgart, 1991, S. 221–258.

[25] Codex Hirsaugiensis. Württembergische Geschichtsquellen, Stuttgart 1887; BBKL, Bd. XV, S. 46–47.

[26] A. K o t t m a n n und H. S c h l o ß. Hirsau im Schwarzwald, Zehnte Auflage, Regensburg, 1994, S. 112–114.

բացվեց որպես կաթոլիկ եկեղեցի: Սբ. Ավրելիուսի շիրիմի տապանին գրված է. «Ավրելիուս՝ եպիսկոպոս Հայաստանից, մահացել է Միլանում 475 թ.: Մասունքների տեղափոխումը Հիրսաու՝ 830 թ.՝ Վերչելլիի եպիսկոպոս Նոթինգի կողմից: Կոչվեցավ և պատվեցավ որպես քրիստոնյա ժողովրդի խնամակալ՝ բազմապիսի հիվանդության և կարիքի պահին»[27]*:*

Սուրբ մասունքի պաշտամունքի մեջ հատուկ մեծարում ունեին նահատակված սրբերի մասունքները: Նահատակությամբ նշանավորվում էր ճշմարիտ կյանքի և փրկության հաղթանակը ֆիզիկական մահի նկատմամբ: Ըստ այդմ, գերմանական հողերում առավել լայն տարածում գտավ նահատակ սբ. Բլասիուսի (Բարսեղ Սեբաստացի, 316 թ.) պաշտամունքը, հիշատակման օրը հունվարի 3-ին է: Նա Բադեն-Վյուրտեմբերգում իր պատվին կոչված Սանկտ Բլասիեն քաղաքի, ինչպես նաև Մայնց, Լյուբեկ, Տրիր, Բրաունշվայգ[28] *քաղաքների հովանավոր սուրբն է՝ գերմանական 4–5 գլխավոր, մինչ օրս ամենասիրված սրբերից մեկը*[29]*: Բլասիուսին (հայերեն՝ Բարսեղ, ռուսերեն և սլավոներեն լեզուներում՝ Վլաս), հիրավի, կարելի է համարել ամենահայտնի հայերից մեկը Եվրոպայի պատմության մեջ: Գերմանիայում, բազմաթիվ եկեղեցիներից զատ, գոյություն ունեն սբ. Բլասիուսի անվան փողոցներ, հրապարակներ, հաստատություններ, միություններ, օրդեններ: Նրա պաշտամունքը, առհասարակ, տարածված է ողջ Եվրոպայում (Իտալիա, Շվեյցարիա, Հոլանդիա, Բելգիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմտյան ողջ հատվածը՝ ներկայիս Բոսնիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Չեռնոգորիա, Սերբիա և Սլովենիա երկրները, Բուլղարիա, Լեհաստան, Իսլանդիա, Իսպանիա, Հունաստան, Ռուսաստան և այլն) և Հարավային Ամերիկայում (Արգենտինա, Բրազիլիա): Բլասիուսը ծագումով հայ էր՝ այդ ժամանակ Հռոմի տիրապետության տակ գտնվող Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքից (այժմ՝ Սիվաս, ըստ այդմ՝ «Սուրբ Սեբաստ Բլասիուս»*[30]*): Ապահովված հայկական ընտանիքից էր և բժշկական կրթություն էր ստացել: Հանդուրժող, հարեհաս և բարեպաշտ է եղել. բժշկել ու փրկել էր անթիվ մարդկանց՝ անկախ նրանց հավատքից, սոցիալական կարգավիճակից կամ ազգությունից*[31]*: Ըստ այդմ՝ սբ. Բլասիուսը գերմանական հողերում առաջին «հարեհաս» սուրբն էր մի շարք հիվանդությունների և մասնագիտությունների: Բլասիուսը (Բարսեղ) իր հարազատ քաղաքում՝ Սեբաստիայում,*

---

[27] A. Ordukhanyan. *Նշվ. աշխ., էջ 11:*

[28] O. Wimmer und H. Melzer. *Նշվ. աշխ., էջ 174:*

[29] J. Braun. Tracht und Attribute der Heiligen in der deutschen Kunst, Stuttgart, 1943, S. 141–145.

[30] O. Wimmer. *Նշվ. աշխ., էջ 94,* E. Wolfgang. Blasius aus Sebaste als Freilichtspiel bei den Domfestspielen St. Blasien.– Armenisch-Deutsche Korrespondenz, Heft 2, № 116, 2002, S. 43.

[31] A. Krug. Die antiken Gemmen am Armreliquiar des hl. Blasius in Braunschweig.– Der Welfenschatz und sein Umkreis, Mainz, 1998, S. 93–111.

ընտրվել է եպիսկոպոս: Լիցինիանոս (Լիկիանոս) կայսեր օրոք (308–324 թթ.)[32] իր հավատքի պատճառով Բլասիուսը հետապնդվել է և ծպտվել քարայրում: Այդ ընթացքում, լեգենդի համաձայն, նա անտառի կենդանիներին օրհնում և բժշկում էր: Ըստ այդմ՝ գերմանական հողերում Բլասիուսը փոխարինեց վայրի և ընտանի կենդանիների հովանավոր հեթանոս աստված Վոլոսին (արևելքում սբ. Բլասիուսը ոչխարների ու այծերի պաշտպանն էր և եղանակի պահապանը՝ փոթորիկներից): Բլասիուսը, ի վերջո, հայտնաբերվեց, կտտանքների ենթարկվեց և սպանվեց (սկզբում ծեծել են փայտերով, հետո՝ խոշտանգել երկաթե սանդերքով, ի վերջո՝ գլխատել): Ըստ ավանդության, երբ սբ. Բարսեղը (Վլասը) բանտում սպասում էր իր մահապատժին, թույլ են տալիս, որ մի կին իր որդուն, որ ձկան փուշ էր կուլ տվել և խեղդվում էր, բերի նրա մոտ: Վլասն անմիջապես աղոթքով բուժել է երեխայի կոկորդը, և այս պատմության հետ է կապված սբ. Բլասիուսի տոնին կոկորդների օրհնության՝ մինչ օրս պահպանված ավանդույթը: Մոտավորապես 316 թ. նա պաշտվել է որպես սուրբ նահատակ: Նշենք, որ Հռոմեական եկեղեցին վաղ միջնադարում ձևականորեն էր մերժում մասունքի մասնատումը, բայց բարձր և ուշ միջնադարում դա համատարած դարձավ[33]: Այդպես քրիստոնյա հավատավոր հայերի և հռոմեացիների կողմից սբ. Բլասիուսի մասունքներն[34] ու նրա պաշտամունքը տարածվեցին ողջ քրիստոնյա աշխարհում, նախ՝ Իտալիայում (Տարանտո, Հռոմ), Հունաստանում, դալմաթյան Ռագուզայում (այժմ՝ խորվաթական Դուբրովնիկ[35] քաղաքը՝ Ադրիատիկ ծովի ափին, որտեղ մինչ օրս էլ Դուբրովնիկի դրոշի վրա պատկերված է սբ. Բլասիուսը՝ որպես քաղաքի հովանավոր սուրբ), հետագայում՝ Շվեյցարիայում, ապա՝ ողջ աշխարհում: IX դ. Բլասիուսի մասունքները բերվեցին Գերմանական Ազգ Սրբազան Հռոմեական Կայսրություն՝ վյուրտենբուրգյան Հռենոսի Բենեդիկթյան աբբայություն, հետո՝ Պադերբորն, Բուսդորֆշթիֆթ, Բրաունշվայգ, և վերը նշված քաղաքները, որտեղ նրա անունով կառուցվեցին եկեղեցիներ: XII դ. սբ. Բլասիուսն առավել մեծ ժողովրդականություն ձեռք բերեց խաչակիր-

---

[32] H. P o h l s a n d e r. Constantine I (306–337 AD), Written, 2004, S. 1–8. Retrieved, 2007, S. 3–20.

[33] E. S t a h l e d e r. Landshut, Dominikanerkirche St. Blasius, München, 1982, S. 207–218; A. H e n k i n g, W. K a u f m a n n und R. L e u d e s d o r f f. 1000 Jahre St. Blasius in Münden, Hamburg, 1980, S. 26–35.

[34] *Դեռ անտիկ ժամանակներում աստվածային ուժի ներկայության համոզմունք կար ոչ միայն սրբի ողջ մարմնում, այլև՝ նրա առանձին մասերում, սրբին առնչվող առարկաների մեջ: Դա արտահայտվեց նաև քրիստոնեական մասունքի պաշտամունքի մեջ:*

[35] *Խորվաթագետ Ա. Ռ. Բաղդասարովի և խորվաթ պատմաբան Վ. Բ. Լուպիսի համատեղ աշխատության՝ «Հայաստանը սուրբ Վլասի հայրենիքն է» գրքում, հեղինակները ուշադրության են արժանացրել հայոց պատմությանն ու մշակույթին, հայ-խորվաթական ազգային-մշակութային և հոգևոր առանձին կապերի բացահայտմանը, այդ թվում՝ Դուբրովնիկ քաղաքի հովանավոր սուրբ՝ նահատակ Վլաս (Բարսեղ) Սեբաստացուն (տե՛ս* A. B o g d a s a r o v, V. L u p i s. Armenia-Homeland of St. Blaise, Ston, 2015*):*

ների միջոցով, և առավել հաճախ ընդգծվեց նրա հայկական ծագումը[36] (Կիլիկիա-խաչակիրներ համագործակցությունը բավականին հնչողություն ուներ[37]): Կայսրության հզորագույն իշխան Հենրիխ Առյուծը (1129–1195 թթ.) «Սուրբ երկիր» (Երուսաղեմ) իր ուխտագնացության ընթացքում բազմաթիվ հայկական բնակավայրերի հետ ծանոթանալով՝ վերադառնալուց հետո Բրաունշվայգ քաղաքում հիմնել է իր նստավայրը[38], և, ի պատիվ սբ. Բլասիուսի, քաղաքի հրապարակում՝ մասունքների վրա, կառուցել (1173 թ.) սբ. Բլասուսի եկեղեցին՝ վանական համալիրով[39]:

Սուրբ Ծննդից 40 օր հետո՝ փետրվարի 3-ին՝ Բլասիուսի (Վլաս) օրը, Գերմանական կայսրությունում ավարտվում էին Սուրբ Ծննդոց տոնակատարություններն ու սկսվում էր ջրի, հացի, գինու և պտուղների օրհնությունը: XVI դ. գերմաներենում ի հայտ եկավ հանրաճանաչ «Բլասիուսի օրհնությունը», որը նրա հիշատակի օրը ընծայվում է Աստծուն՝ Բլասուսի անունից կամ «բարեխոսությամբ»: Մեր օրերում Սանկտ Բլասիեն քաղաքի սբ. Բլասիուս եկեղեցում «Բլասիուսթագին» (Բլասիուսի տոնին)՝ պատարագի աղոթքի ժամանակ, արդեն հնչեցվում է նաև հայերեն Տերունական ա-

---

[36] P. H a l f t e r. Armenier und Franken im Zeitalter der Kreuzzüge.– Armenisch-Deutsche Korrespondenz, Heft 1–2, № 6, 2003, S. 36–40, 119–120, 120–130.

[37] *1125 թ. խաչակիրներին միացած Կիլիկիայի Մեծ իշխան Թորոս Ա Ռուբինյանը, ուխտի գնալով Երուսաղեմ, հիմնադրեց «Սուրբ Վլասի» Հայկական ռազմավարական օրդենը՝ վերջինիս ղեկավար նշանակելով իր եղբայր Լևոնին, որ հռչակավոր էր դարձել իր ռազմական ձիրքով՝ Բուրյանների էմիրության կայազորի դեմ նույն թվականին Սազազի ճակատամարտում՝ ղեկավարելով Ռուբինյանների բանակը: Հաստատվեց նաև օրդենի ռազմիկի տարբերանշանը՝ կենտրոնում՝ շրջանակի մեջ, կարմիր խաչով սպիտակ թիկնոց, որի վրա պատկերված էր սուրբ Վլասը (Բարսեղը): Այս օրդենը մեծ հռչակ ուներ խաչակիրների մեջ (տե՛ս* E. E i c k h o f f. Friedrich Barbarossa im Orient. Kreuzzug und Tod Friedrichs I. Istanbuler Mitteilungen, Beiheft 17, Tübingen, 1977, S. 157*;* B. B u r c h a r d. Eine Mainzer Handschrift von 1391 mit Miniaturen.– Revue des Etudes Armeniennes, T. 25, Paris, 1994–1995, S. 353–368; H. H e l l e n k e m p e r. Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien; Studien zur historischen Siedlungsgeographie Südost-Kleinasien, Geographica Historica, Bd. I, Bonn, 1976, S. 134–142; E. L o h m a n n. Im Kloster zu Sis; Ein Beitrag zu der Geschichte der Beziehungen zwischen dem Deutschen Reich und Armenien im Mittelalter, Striegau, 1901, S.110–125):

[38] A. Q u a s t. Der Sankt-Blasius-Dom zu Braunschweig, seine Geschichte und seine Kunstwerke. 3. Auflage, Braunschweig, 1982, S.16–21.

[39] *2005 թ. մայիսի 4-ին, Հայաստանում գործող «Հայ մշակութային ժառանգության» պահպանման հիմնադրամի հովանավորությամբ, Բրաունշվայգ քաղաքի սբ. Բլասիուս եկեղեցու բակում տեղադրվել է խաչքար՝ հայկական ավանդական զարդանախշերով՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Կոթողի հեղինակն է խաչքարագործ Արսեն Փանոսյանը, ով հեղինակն է նաև նույն թվականի ապրիլի 24-ին, կրկին վերը նշված հիմնադրամի հովանավորությամբ, Բրեմենի քաղաքային զբոսայգում հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին տեղադրված խաչքար-հուշարձանի (*www.hy. Wikipedia.org/wiki/*Արսեն–Փանոսյան):*

դոթքը՝ ի պատիվ Բլասիուսի: 2016 թ.՝ այդ տոնի օրը, Ֆրանցիսկոս Սրբազան քահանայապետը հրապարակային ունկնդրության ժամանակ ասել է. «Այսօր հիշատակում ենք Սուրբ Վլասի տոնը, որը Հայաստանի նահատակն է: Սուրբ Վլասը մեզ հիշեցնում է Ավետարանը հռչակելու հանձնառությունը՝ նույնիսկ դժվարին պայմաններում»[40]:

Գերմանական հողերում, մասնավորապես, Հռենոսյան շրջանի[41] հայտնի սուրբ է Սերվատիուսը (ըստ որոշ աղբյուրների՝ նրա անունը Սրբատիոս-Սերովբե է, իսկ հոլանդերեն նրան կոչում են նաև Սինտ Սերվաս: Սբ. Սերվասի տոնին Հոլանդիայում միշտ բերվում են հայկական համայնքի դրոշները՝ ի երախտագիտություն հայ եպիսկոպոսի ունեցած քրիստոնեական պատմական ավանդի)[42]: Նա, լինելով քրիստոնեության տարածողը Նիդեռլանդներում, ի տարբերություն Ավրելիուսի և Բլասիուսի, իր կենդանության օրոք եղել է Գերմանական կայսրությունում: Նրա անունով եկեղեցիներ կան Քյոլնում, Բոննում, Զիգբուրգում: Գերմանիայում այսօր կան նաև սբ. Սերվատիուսի անվան մշակութային, եկեղեցական բազմաթիվ հաստատություններ ու կազմակերպություններ:

Գերմանիայում հայ սրբերի չմարած և կենդանի պաշտամունքը, քաղաքական նկատառումներից զատ, յուրօրինակ մշակութային կամուրջ է, որը հարյուրամյակների սահմանագծին տարածության ու ժամանակի մեջ անցումային մի վիճակ է ստեղծում ժողովուրդների համար՝ նմանության և տարբերության, անցյալի ու ներկայի, արտաքին և ներքին ներառման ու բացառման բարդ համադրություններով: Բնականաբար, հայ հոգևոր հայրերը գործել են նախնառաջ հոգևոր բարեպաշտության, քրիստոնեական բարոյականության չափանիշներից ելնելով՝ հատուկ չառանձնացնելով իրենց էթնիկ պատկանելիությունը: Նրանց հայ կամ Հայաստանից լինելը մշտապես կարևորել և ընդգծում են օտարները:

---

[40] Առաջնորդարան Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի.–hy.radiovaticana.va/news/-2016/02/03*:*

[41] O. M ü l l e r. Stadtkirche und Landskreis, Band I, Erster Halbband, Freiburg, 1965, S. 282–284.

[42] Նիդեռլանդներում հաստատված և այդ երկրի առաջին եպիսկոպոս, ծագումով հայ հոգևորական սուրբ Սերվատիուսը նիդեռլանդական ամենահայտնի սրբերից է: Լատինական աղբյուրների համաձայն՝ նա վախճանվել է 384 թ. Նիդեռլանդներում, և նրա մասունքները պահվում են Մաստրիխտի նշանավոր Սինտ Սերվասկերկ եկեղեցում. այստեղ կա նաև թանգարան [տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան. 3.0 (Creative Commons BY-SA 3.0)]*:*

КАНОНИЗАЦИЯ АРМЯНСКИХ ДУХОВНЫХ ОТЦОВ В ГЕРМАНСКИХ ЗЕМЛЯХ

АНУШ АРШАКЯН

Резюме

Информация о существенной роли отдельных армян в деле распространения христианства, а также об их стране широко распространялась в германских землях через церковные писания. В средние века преобладающим направлением в «миграционной географии» было перемещение священных реликвий с юга на север, в края, богатые святыми и ранней христианской героической историей: Армения, регионы средиземноморской и латинской Европы. Христианские духовные отцы из Армении – Аврелий, Влас и Серватия – в средние века обожествлялись в германских землях, и все еще живой культ армянских святых в Германии является своего рода мостом между древней христианской Арменией и Центральной Европой.

CANONIZATION OF ARMENIAN SPIRITUAL FATHERS IN THE GERMAN LANDS

ANUSH ARSHAKYAN

Summary

The information about the essential role of individual Armenians in the spreading Christianity and also about their country were widely distributed in the German lands through the scriptures. In the Middle Ages the prevailing direction in “migration geography” was moving the sacred relics from south to north – territories – rich in saints and heroic history of the early Christian: Armenia, the regions of the Mediterranean and Latin Europe. The Christian spiritual fathers–natives of Armenia – Aurelius, Vlas and Servatius, were idodized in the Middle Ages in the German lands. And still alive is the cult of Armenian saints in Germany: it is a kind of bridge between the ancient Christian Armenia and Central Europe.